

ՀՐԱՄԱՅՈՒՆ ԵՂԱՆԱԿԻ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ԱՅԼ ԻՄԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ

Հասկացական կարգերը գոյություն ունեն երկու ձևով՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ, իսկ մրանց միջև կտրուկ սահման կա, քանի որ նրանցից յուրաքանչյուրն ունի հակադիր բաղադրիչներ (Մեշչանինով)։ Սուբյեկտիվության պահը լեզվաբանական կարգերում կախված է այն բանից, որ խոսողն իր տեսակետն է արտահայտում իրականության այս կամ այն երևույթի վերաբերյալ, և նա այդ անում է քերականական կարգերի օգնությամբ, որոնք տարբեր են՝ կախված կոնկրետ լեզվից։

Սովորաբար բայի եղանակը դիտվում է որպես ասույթի բովանդակության հարաբերությունը իրականությանը խոսողի տեսանկյունից, իսկ մենք գործ ունենք այդ բովանդակության մեջ թաքնված օբյեկտիվ և սուբյեկտիվ գործընթացների հետ։ Բայի եղանակը հասկացական այն կարգերից է, որին նվիրված են ինչպես արտասահմանյան այնպես էլ խորհրդային լեզվաբանների բազմաթիվ աշխատություններ։ Սակայն, առ այսօր վեճեր են գնում եղանակի քանակի, ժամանակի, կերպի, սեռի հարցերի վերաբերյալ, քանի որ բայի բոլոր քերականական կարգերը ներունակ և անքակտելիորեն իրենց արտահայտությունն են գտնում ասույթի բայ-ստորոգյալի մեջ և համահունչ լրացնում են մեկը մյուսին։ Բայի քերականական կարգերին լեզվաբաններն անդրադառնում են առանձին նախադասությամբ, մինչդեռ այսօր այն պետք է դիտել խոսույթում։ Խոսույթ ասելով հասկանում ենք դիտավորություն, կանխենթադրույթ և ենթադրություն։

Քերականական կարգերը խոսույթում կարող են հանդես գալ իրենց առաջնային և երկրորդական նշանակություններով։ Սույն հոդվածի նպատակն է ևս մեկ անգամ անդրադառնալ հրամայական եղանակի տեղին ու դերին խոսույթում և հրամայականը ուսանողին ներկայացնել որպես մեկ ամբողջություն իր արտահայտության առաջնային և երկրորդական միջոցներով։

Ըստ ավանդույթի հրամայական եղանակը դիտվում է որպես ուղիղ եղանակ, որը ցույց է տալիս հասցեագրված հրաման, հորդոր իր առաջնային նշանակությամբ։ Սակայն հրաման կարելի է արտահայտել ինչպես հրամայական, այնպես էլ այլ քերականական երևույթների միջոցով, որոնք դա իրականացնում են իրենց երկրորդական իմաստներով։ Հրամայական եղանակի արտահայտած հրամանը, ինչպես արդեն նշեցինք, հասցեագրված հրաման է, որը թույլ է տալիս հրամայականը առանձնացնել որպես ինքնուրույն եղանակ

բայի համակարգում: Ջահուկյանը տարբերում է եղանակավորության երեք հիմնական դրսևորում՝ զգացմունք, ցանկություն և սուբյեկտիվ հասարակական գնահատում: Սուբյեկտիվությունը գերակշռում է հրամայական եղանակի մեջ, ուստի հրամայական եղանակի արտահայտման իմաստները բազմազան են և օգտագործվում են անզերեցում և հայերենում արտահայտելու համար այնպիսի երևույթներ, ինչպիսիք են՝ խնդրանքը, հրավերը, աղաչանքը, զգուշացումը, հորդորը և այլն, իմաստներ, որոնք դժվար է գրության մեջ արտահայտել առանց հնչերանգի, և որոնք մեզ պարզ են դառնում համատեքստից, որտեղ մենք գործ ունենք ինչպես իմաստաբանական այնպես էլ գործաբանական մակարդակների հետ:

- Հրավեր՝ Come in.
- Առաջարկ՝ Taste my cake.
- Ցանկություն՝ Bring some water.
- Մաղթանք՝ Have a good holiday.
- Հուսադրում, սրտապնդում՝ Write another letter.:
- Սպառնալիք՝ Think of the results.
- Խնդրանք՝ Please water the flower.
- Խորհուրդ՝ Don't forget Ann's birthday.
- Հրաման՝ Sit here and don't move.
- Ձգուշացում՝ Watch out! Look out!
- Ներման հայցում՝ Forgive me. I didn't want to hurt you.
- Արգելք՝ Don't stay here. (ժխտական նախադասություններում):
- Ցուցում՝ Turn left.
- Հանձնարարական՝ Get a piece of chalk.
- Պատվիրան՝ Respect your parents.
- Գործընթաց՝ Add some salt into the soup and switch off the stove:

Լեզվաբանները հրամայականին տալիս են այսպիսի բազմիմաստություն, ելնելով համատեքստից, խոսույթի ոլորտից, բայց նրանք բոլորն էլ կառուցողական առումով հրամայական նախադասություններ են, որտեղ բայի գործողությունն արտահայտված է հրամայական եղանակի առաջնային իմաստով: Բոլոր այս իմաստները կանխենթադրույթներ են և միայն համատեքստը կարող է որոշել թե այդ բազմիմաստ հրամայականից որը կընտրվի մեր ասույթի համար: Այս է պատճառը, որ ֆրանսիացի լեզվաբան Գիյոմը տարբերում է լեզվի և խոսքի մակարդակներ և յուրահատուկ մոտեցում է ցուցաբերում հրամայական եղանակի նկատմամբ: Ըստ նրա հրամայական եղանակը ոչ թե լեզվի, այլ խոսքի եղանակ է, քանի որ միևնույն կառուցվածքը համատեքստից, խոսող անհատի դիտավորությունից և ասույթի հնչերանգից կախված տարբեր իմաստներ կարող է արտահայտել (Գալ, 308): Մյուս կողմից կան նաև այնպիսի բայեր, որոնք իրենց բովանդակության մեջ և ոչ հրամայական կառույցներում պարունակում են հուզարտահայտչական իմաստներ, որի հետևանքով հրամա-

յական եղանակի կառուցվածքի և արտահայտության բովանդակության մեջ երբեմն այնպիսի խզում է առաջանում, որ դժվար է պարզել հրաման է այն, թե՛ ոչ:

Հրամայականի արտահայտած իմաստները կարող են նաև դուրս գալ հրամայականի շրջանակներից և մոտենալ մյուս եղանակներին և այդ իսկ պատճառով նրանք, չունենալով հրամայական կառույց և հրամայական հնչերանգ և ունենալով այլ կառուցվածք, կարող են բոլորովին անհասկանալի լինել, այսինքն չարտահայտել հասցեագրված հրամայականի իմաստ՝ ցանկություն կամ խնդրանք, հրաման կամ զգուշացում: Ըստ Գիյոմի միևնույն միտքը կարելի է արտահայտել ինչպես միևնույն քերականական կարգերով, այնպես էլ այլ բառաքերականական միջոցներով: Հրամայականի իմաստը կարող է արտահայտվել մեկ բառով, մեկ հնչերանգով, մեկ նախադասությամբ: Մարդ էակը անկախ լեզվից նույն ձևով է մտածում /*Դեկարտ*/, հետևաբար բոլոր լեզուներում կան մարդու միտքն արտահայտելու ժամանակի, եղանակի տարբեր միջոցներ: Այստեղից էլ թխում են լեզվական հանրությունները (Մեշչանինով, Բրյունո, Եսպերսեն), որոնք հատուկ են մարդկային լեզվին, իսկ արտահայտության միջոցներով տարբեր՝ կախված կոնկրետ լեզվից: Իսկ սա նշանակում է, որ հրամայական եղանակից բացի նրա իմաստները կարելի է արտահայտել նաև այլ միջոցներով՝ ուրիշ եղանակա-ժամանակաձևերով: I want you to go out - նախադասությունն արտահայտում է եղանակավորող անձ՝ ես, եղանակավորող ստորոգյալ՝ ուզում եմ, դուք՝ այն անձը՝ խոսակիցը, որին ուզում ենք, դրդում ենք, որ կատարի, իրականացնի մեր կանխենթադրույթը՝ մեր ուզած գործողությունը, մեր դիտավորությամբ, և թույլ է տալիս ենթադրել Go out հրամանը: Իսկ "Go out" հրամայական նախադասությունը միայն առանձին բայաձևով է արտահայտում մեր ուզած գործողությունը: Առաջին նախադասությունը այնքան պարզորոշ չէ որքան երկրորդը: Միևնույն հասկացական կարգի արտահայտման համար խոսողը՝ տարբեր լեզվական միավորներ կարող է օգտագործել /*Բոնդարկո*/՝ ձևաբանական, շարահյուսական, բառակազմական, բառագիտական, որոնք միահյուսվում են և իրենց ազդեցությունն են թողնում մեկը մյուսի վրա, քանի որ նրանք պատկանում են տարբեր մակարդակների և միահյուսվում ու փոխազդում են ըստ առաջնային և երկրորդական պլանի գործածության: Այլ իմաստի դեպքում փոխվում է ոչ միայն եղանակը, այլև նախադասության կառուցվածքը, տիպը, բնույթը, այսինքն հրամայական նախադասությունը կարելի է փոխարինել և պատմողական, և հարցական, և ժխտական և հարցա-ժխտական նախադասություններով: Այսպես, օրինակ՝ ա) Make me coffee - հրամայական նախադասություն, բ) I need coffee - պատմողական, գ) իսկ Could you make me some coffee? - հարցա-ժխտական: Ինչպես տեսնում ենք երեք տարբեր նախադասություններն էլ՝ հրամայական,

հաստատական, հարցաժխտական, համընկնում են իրենց իմաստով՝ խոսողը սուրճ է ուզում խոսակցից։ Սա այն ենթադրությունն է, որ կարող է հանվել վերոհիշյալ ասույթներից, այսինքն՝ կարելի է ենթադրել, որ երեք ասույթներն էլ հոմանիշներ են, քանի որ երեք նախադասություններն էլ արտաբերելով խոսողը ոչ բացարձակորեն նույն իմաստն է արտահայտում՝ սուրճ է ուզում խոսակցից։ Բայց երեք նախադասություններն էլ տարբերվում են ոչ միայն իրենց բնույթով՝ հարցական, հաստատական, և հարցա-ժխտական, այլև՝ գործածված եղանակաձևերով՝ ա) հրամայական եղանակ է գործածվում իր առաջնային իմաստով, բ) սահմանական եղանակ՝ հաստատական խոնարհմամբ, գ) ստորադասական (թեք) եղանակներից մեկը, իսկ եթե ավելի կոնկրետացնենք՝ ըղծական երկրորդը հարցա-ժխտական խոնարհմամբ։ Սա ևս մեկ ապացույց է, որ հրամայականի իմաստները կարելի է արտահայտել ինչպես տարբեր բնույթի նախադասություններով, այնպես էլ տարբեր եղանակներով՝ սահմանական, պայմանական, ըղծական, ենթադրական և այլն։ Մյուս կողմից վերը նշված օրինակներից մեկը՝ հրամայական նախադասություն է, մյուսը՝ պատմողական, իսկ երրորդը՝ հարցական։

Ինչպես արդեն նշեցինք սահմանական եղանակը կարող է արտահայտել հրամայականի իմաստային երանգներից որևէ մեկը. բայց հարց է ծագում, սահմանական եղանակով գործածված բոլոր նախադասությունները կարող են արտահայտել հրամայական եղանակի իմաստ։ Պարզվում է որ ոչ։ Դա կարելի է իրականացնել սահմանական եղանակի ա/ պատմողական, բ/ հարցական, գ/ ժխտական նախադասություններով, սահմանական եղանակի 1. տարբեր ժամանակաձևերով, այսպես օրինակ՝ We are leaving now. Մեկնում ենք հիմա նախադասության մեջ գործածված է սահմանական եղանակի ներկա ընթացքայինը, որն իր երկրորդական իմաստով խոսակցին մղում է, դրդում է դուրս գալ, որը բխում է մեր դիտավորությունից։ 2. երբ օգտագործվում է անգլերենի եղանակավորող բայերից մեկը՝ I can have a cup of coffee. I've 15 minutes at my disposal, որը նշանակում է՝ Bring me a cup of coffee., և այս նախադասություններում ենթական արտահայտվում է՝ ա/ առաջին դեմքի դերանունով (I), բ/ երկրորդ դեմքի դերանունով՝ You can't cross the street here. = Don't cross the street here. There is no crossing here. = Don't cross here. Ինչպես տեսնում ենք օրինակները պատմողական նախադասություններ են, բայց ակնառու տարբերություններ կա նրանց մեջ։ Մեկը՝ հաստատական է, մյուսը՝ ժխտական, որտեղ գործածվում են եղանակավորող բայերը, բայց դրա հետ մեկտեղ նրանք համարժեք են և դա է ամենակարևորը

Ֆիմնական եղանակավորող բայերը երեք տարբեր իմաստներ են արտահայտում 1. հիմնական կամ առաջնային(անհրաժեշտություն, կարողություն, ենթադրություն), 2. հրամայական, ենթադրական։ Նախադասություններ-

րում, որտեղ եղանակավորող բայերը հրամայական իմաստով են օգտագործվում, ենթական արտահայտվում է անձնական դերանունով: You can/may/must/should go now, Mary, որը նշանակում է՝ Go now, Mary, այսինքն՝ մղում է Մերիին իրականացնել զնալու գործողությունը:

Եղանակավորող բայերը կարող են հրամայականի իմաստով օգտագործվել ոչ միայն հաստատական, այլ նաև հարցական նախադասություններում՝ Can you lend me some money?, որը նշանակում է՝ Give me some money, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ հարցական նախադասություն սահմանական եղանակով արտահայտված, բայց հրամայական իմաստով, որը կարելի է ասել, որ սահմանական եղանակի առաջնային իմաստը չէ:

Հրամայականի իմաստով կարող են օգտագործվել այլ բայեր սահմանական եղանակում, որոնք նույնպես եղանակավորություն են արտահայտում: ա) I want a glass of water. բ) I'll have a glass of water, որը նշանակում է Give me some water.: Երեք համարժեք նախադասություններից առաջինը՝ պատմողական նախադասություն է, որի մեջ մենք հրամայականի իմաստ ենք արտահայտում սահմանական ներկայով, իսկ երկրորդ նախադասության մեջ՝ սահմանական ապառնիով: Ընդհանրապես քերականական դասագրքերում սահմանական եղանակի ներկայի և ոչ մի այլ ժամանակածների գործառույթների մեջ չի նշվում հրամանի, խնդրանքի և այլն իմաստներ: Այստեղ բառերի տակ թաքցված, շղարշված իմաստը մեր կանխենթադրույթն է, որն արտահայտում է հրաման համատեքստից ելնելով, իսկ հրամայական եղանակի կանխենթադրույթը համեմատաբար ավելի պարզ է ու թափանցիկ:

Հրամայականի իմաստ հաստատականից բացի կարող են արտահայտել և հարցական նախադասությունները, ինչպես եղանակավորող բայերով, այնպես էլ սահմանականի ժամանակածներով գործածված այլ բայերով և կոչվում են հորդորական, որով հարցնողը միաժամանակ հրահրում, դրդում է խոսողին, որպեսզի վերջինս իր դիտավորությանը համաձայնվի հարցի բովանդակությամբ և իրականացնի կամ չիրականացնի նշված գործողությունը:

You will visit me again, won't you? = Visit me again.

Հորդորական հարցական նախադասությունները հաճախ ուղեկցվում են զանազան ծայրակություններով, հորդորող բառերով, որոնց ձևավորում են յուրահատուկ հորդորական նախադասություններ:

Այսպես օրինակ՝ ա/Do you have mineral water?, որը նշանակում է՝ Give me some/ a bottle of mineral water: բ/Can you lend me some money? = lend me some money: գ/Do you have any slippers for me to wear. = Give me slippers to wear. դ/- May I sit to dinner now? – No, Jack you may not sit to dinner now. – որը նշանակում է՝ Don't sit here without changing. = First change and then sit down to dinner. Առաջին հայացքից այս նախադասությունները հարցական նախադա-

սություն են, որտեղ գործողությունն արտահայտվում է սահմանական եղանակով, բայց իմաստաբանորեն այդ նախադասությունները նշանակում են՝ Give me some mineral water., Lend me some money. և այլն : Ստացվում է, որ հարցական նախադասությունները նույնպես գործածվում են հրամայականի իմաստով: Այսինքն իր բառակարգով հարցական նախադասությունը հրամայականի իմաստ է արտահայտում, բայց ոչ բացահայտ, այլ հրամայականի այդ իմաստի մասին հուշում է համատեքստը կամ այն իրավիճակը, որտեղ ասվել է այս միտքը:

Հրամայականի իմաստը կարելի է արտահայտել նաև պայմանական եղանակի հաստատական, հարցական և ժխտական նախադասություններով: Այսպես օրինակ՝ w/ would like you to sit still, որը նշանակում է՝ Sit still. p/ Would you like to join me?, որը նշանակում է՝ Come with me!, q/ Would you send me the documents as soon as possible? Send me the documents., r/ Wouldn't you like you to join me?, որը նշանակում է՝ Come with me., b/ Hurry up or you would miss the train. Իսկ I wouldn't like you to come, որը նշանակում է Don't come. գ և դ-ն կառուցվածքային առումով պարզ նախադասություններ են, թափանցիկ կանխենթադրույթով, որտեղ նշույթավորված չեն պայմանի երկրորդական նախադասությունները, որոնք կարող են շատ տարբեր լինել կախված՝ խոսույթից, համատեքստից, հաղորդակցական իրավիճակի պայմաններից :

Այս բոլոր նախադասությունները իրենց բնույթով լինելով պատմողական, հարցական, ժխտական, իրենց ենթատեքստով կամ կանխենթադրույթով հրամայականի իմաստ են արտահայտում պայմանական եղանակի ներկա ժամանակով:

Հրամայականի իմաստի արտահայտման միջոցներից կարող է լինել նաև անգլերենի ըղծական երկրորդ թեք եղանակի կաղապարային համակարգը: Այսպես օրինակ՝ 1. You had better have a walk now, որը նշանակում է՝ Take a walk now. Կամ 2. I would rather you didn't spoil my party = Don't spoil my party. 3. I wish you didn't disturb me, որը նշանակում է՝ Don't disturb me., Կամ՝ it is time you stopped smoking., որը նշանակում է՝ Give up smoking., You look at me as if I were guilty = Don't look at me as if I were guilty., Could you send me some money? Այս նախադասությունը նշանակում է՝ Send me some money.: Ինչպես ցույց են տալիս նշված նախադասությունները, բոլորն էլ պատմողական նախադասություններ են իրենց բնույթով, որտեղ հանդիպում ենք ըղծական երկրորդը ապառնի գործողություն արտահայտելու համար, քանի որ հրամայականի արտահայտած գործողությունը նույնպես վերաբերվում է ապառնիին: Գրեթե բոլոր կաղապարները՝ կամ ցանկություն են արտահայտում, կամ խորհուրդ, կամ ափսոսանք, բայց ենթատեքստով նրանք բոլորն էլ

հրամայականի իմաստով են գործածվում, համապատասխանաբար հրամայականի իմաստ են արտահայտում իրենց երկրորդական նշանակությամբ :

Հաջորդ թեք եղանակը, որը կարող է գործածվել հրամայականի իմաստով, ենթադրականն է. It is necessary that you should go there.: w/ My aim is that you should go there.: p/ I suggest that you should go there.: Բոլոր այս նախադասություններն իրենց բնույթով պատմողական նախադասություններ են, որոնք արտահայտված են ենթադրական թեք եղանակով և որոնք իմաստով կամ խորհուրդ, կամ առաջարկ, կամ ցանկություն են արտահայտում, որոնք ինչպես հայտնի են, հասցեագրված հրամայականի առաջնային իմաստներն են: Բոլոր այս նախադասությունները նշանակում են՝ Go there.

Ըղծական առաջինը նույնպես լինելով թեք եղանակներից մեկը, բացառություն չի կազմում և կարող է հրամայականի իմաստով գործածվել, քանի որ այս եղանակը գործածվում է նույն լեզվական կաղապարներում, ինչ որ ենթադրականը՝ մի չնչին տարբերությամբ: Նրանք տարբերվում են միայն ըղծական առաջինի գործածությամբ հին անգլերենից եկած մաղթանքներում, օրհնանքներում և անեծքներում: God bless you!, որը նշանակում է՝ Be always blessed!, Damn you!, որը նշանակում է՝ Be damned!:

Ինչպես տեսնում ենք անգլերենի բոլոր եղանակները՝ անկախ նրանց ուղիղ, կամ թեք լինելուց կարող են գործածվել հրամայականի իմաստով իրենց երկրորդական նշանակությամբ :

Հրամայականի իմաստ կարելի է արտահայտել ինչպես բայի դիմավոր այնպես էլ բայի անդեն ձևերով, որոնք երեքն են անգլերենում(ամորոշ դերբայ, ածականական դերբայ՝ առաջին, երկրորդ և գերունդ):

Հրամայականի իմաստ կարելի է արտահայտել ա/անորոշ դերբայի օգնությամբ: To catch him.: Եթե փորձենք խոր վերլուծության ենթարկել այս նախադասությունը, ապա կտեսնենք, որ իր ենթատեքստով այն արտահայտում է հրահանգ՝ Catch him., բայց միայն համատեքստը կօգնի մեզ պարզել, որ բայի անդեն ձևի կանխենթադրույթը հրահանգ է: Այս նախադասության մեջ մեր գործողությունն արտահայտված է անորոշ դերբայով, այսինքն բայի չխոնարհված ձևով: Կամ օրինակ՝ I want you to speak aloud նախադասությանը, որը պարզ է իր կառուցվածքով և իր մեջ ամփոփում է ստորոգելիական վերադիր երկտարր կառույց՝ բաղկացած անվանական և բայական բաղադրիչներից, որոնք իրար նկատմամբ նույն հարաբերության մեջ են, ինչ որ նախադասության ենթական և ստորոգյալը, և կապված են երկրորդական ստորոգմամբ, և այդ կառույցի բայական բաղադրիչով՝ արտահայտված անորոշ դերբայով, մենք դրդում ենք անվանական բաղադրիչին իրականացնել մեր դիտավորությունը: Հրամանի արտահայտելը անորոշ դերբայով նույնպես կարևոր երանգ է տալիս հրամանական նախադասությանը և ընդգծում է

հրամանի կարևորությունն ու լրջությունը: I want you to have solved the problem before I return. Մախաղասությունը նույնպես պարզ է իր բնույթով, որտեղ մորից կա ստորոգելիական վերադիր կառույց, որի բայական տարրը արտահայտված է անորոշ դերբայի վաղակատար ձևով և արտահայտում է մախորդման և ավարտվածության գաղափար: Չնայած որ հրամայական եղանակը, ի տարբերություն սահմանական եղանակի, ժամանակի կարգ բացարձակ չունի, այն արտահայտում է հասցեագրված մի գործողություն, որը կատարվելու է կամ չի կատարվելու խոսելու պահից հետո, այսինքն՝ խոսողն իր հրամայական մախաղասությամբ խոսակցին մղում է մի գործողության, որը եթե կատարվի, կկատարվի և կավարտվի խոսելու պահից հետո:

Յրամայականի իմաստ կարելի է արտահայտել նաև գերունդի գործածությամբ՝ No smoking = Don't smoke., No crossing here = Don't cross here.

Յրամայականի երանգ կարող են արտահայտել ոչ միայն բայի անդեն ձևերը, այլև գոյականները՝ Greetings, favoured lady., որը նշանակում է՝ Take my greetings., Greetings to John = Send my greetings to John. Սնշուշտ սրանք զեղչված մախաղասություններ են, որոնք հատուկ են տարբեր գործառական ոճերին՝ խոսակցական, մամկազրական, պաշտոնական, գովազդային և լեզվին:

Եթե, ըստ Գակի (307), հրամայական եղանակի առաջնային նշանակությունը հասցեագրված հրամանն ու հորդորն է, որը մա իրականացնում է հրամայական մախաղասություններում, ապա հրամայականի երկրորդական նպատակն է արտահայտել այնպիսի տրամաբանական հարաբերություններ, ինչպիսիք են պայմանն ու զիջումը՝ իմաստներ, որոնցով մա հանդես է գալիս բարդ ստորադասական մախաղասություններում: Don't hurt this girl or you'll have a problem, որը նշանակում է՝ If you hurt this girl you'll have a problem.:

Լեզվաբաններ Քարելը և Կոմենկերը ուսումնասիրել են մախաղասության եղանակի (sentence mood) հարցը և հանգել այն եզրակացության, որ քաղաքավարության առումով առաջնահերթ տեղ են գրավում հարցական մախաղասությունները, որոնցով խոսողը դիմում է խոսակցին և հրամայում, կամ խնդրում, կամ դրդում է մրան կատարել այս կամ այն գործողությունը, որը նշված է հարցական մախաղասություններում, անկախ նրանից, թե որ եղանակով են նրանք գործածվում: Կասկած չկա, որ թեք եղանակներով արտահայտված հարցական մախաղասությունները ավելի մեծ քաղաքավարություն պետք է արտահայտեն, քան սահմանական եղանակով արտահայտված մախաղասությունները: Դա էլ գալիս է նրանց բնույթից: Երկրորդ տեղում նրանք դնում են պատմողական մախաղասությունները, իսկ երրորդ տեղում՝ հրամայական:

Եղանակավորող բառերի առկայությունը, ըստ այդ հեղինակների, ոչինչ չի ավելացնում քաղաքավարության առումով, քանի որ այդ արդեն արել է

հարցական նախադասությունը, բայց պատմողական նախադասություններն իրենց շրջուն բառակարգով և հարցական նախադասության հնչերանգով նույնպես զգալի քաղաքավարություն են հաղորդում, իսկ անցյալում գործածված եղանակավորող բայերը թեթևակի քաղաքավարություն են արտահայտում:

Կան հեղինակներ՝ Մյուրցիան և Ֆրիմանը (235), որոնք մոռանում են, որ հրամայական եղանակն ունի նաև *please* բառը, որը գործածվում է քաղաքավարական կառույցներում հրամանն ու հորդորը դարձնելով խնդրանք առաջարկ կամ ցուցում, կամ էլի ինչ-որ իմաստ, բայց մյուս կողմից *please*-ը մի բառ է, որը գրեթե գործածվում է բոլոր հրամայական նախադասություններում: Հրամանը, հորդորը քաղաքավարի դարձնելու համար այս հեղինակները գործածում են *kindly* բառը՝ *Kindly pass me the salt.*: Քաղաքավարության նշան է նաև *do* ուժեղացնող մասնիկի գործածությունը՝ առաջարկների, հրավերների, ցանկությունների արտահայտման ժամանակ: *Do show me your papers.* Բայց մինչև այսօր հայտնի է եղել, որ *do*-ն միայն ավելի արտահայտիչ է դարձնում հրամայականի արտահայտած գործողությունը՝ խստություն հաղորդելով նախադասությանը, իսկ *Show me your papers, do.* նախադասությամբ մեջ հորդոր, համոզելն է շեշտվում:

Այսպիսով, միշտ չէ, որ հրամանն ու հորդորը արտահայտվում են հրամայական եղանակով: Շատ են նաև այն դեպքերը, որտեղ նույն միտքը կարող է թաքնված, լուռ կարգերով ու իմաստներով արտահայտվել՝ այլ եղանակային ձևերով՝ պատմողական, հարցական, ժխտական և ժխտա-հարցական նախադասություններով, այլ ժամանակաձևերով, բայի անդեմ ձևով, այլ խոսքի մասերով, իսկ հարցը, թե որ տարբերակին տալ առաջնությունը, որ տարբերակն է նախընտրելի, դեռ կարիք ունի ուսումնասիրության:

Անգլերենի ուսուցման գործընթացն ավելի արդյունավետ դարձնելու նպատակով անհրաժեշտ է ներկայացնել հրամայական եղանակը իր իմաստային դաշտի առաջնային և երկրորդական իմաստներով որպես մեկ ամբողջություն:

Գրականություն

1. Гак В. Г., Теоретическая грамматика французского языка, Добросвет, 2000.
2. Даниленко П. В., Ономастическое направление в истории грамматики, 1988.
3. Мещанинов И. И., Понятийные категории в языке
4. Տահուկյան Գ. Բ., ժամանակակից հայերենի տեսության հիմունքները երևան, 1974
5. Nestfield, English Grammar, London, 1948.
6. Celce-Murcia M., Larsen-Freeman D., The Grammar Book, Boston, 1995.
7. Carell P., Konneker B., Politeness Comparing Native and Nonnative Judgement, Language Learning 31, 1:17-30
8. Stalneker R. Presuppositions, 1973